ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2019/17» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ք. Երևան

24-ը մայիսի 2019թ.
Ժամը 12^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
Կոմիտեի նախագահի տեղակալ **Ս. Աթանեսյան**:
բացողներ՝
Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գլխավոր մասնագետ **Մ. Խաչատրյան**,

Կոմիտեի իրավաբանական վարչության պայմանագրերի նախապատրաստման, կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի գլխավոր մասնագետ **Մ. Եղիազարյան**:

գնահատող՝
Կոմիտեի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի օտարման բաժնի գլխավոր մասնագետ **Լ. Էլարյան**
Ընթացակարգի քարտուղար՝

Կոմիտեի աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջատար մասնագետ՝ **Մ. Փարսադանյան**

1. «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2019/17» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.1 Տեղեկություններ բանակցություններին ներկայացրած մասնակիցների մասին.
1.2 Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
1.3 Բանակցությունների վարման մասին
1.4 Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկատվություններ բանակցություններին ներկայացած մասնակիցների մասին

1.1.1 Հանձնաժողովի նախագահը հայտարարեց 17.05.2019թ. կասեցված նիստը շարունակելու մասին:
1.1.2 Բանակցությունների էին հրավիրվել «Սմարթլայն» և «Միսմա» ՍՊԸ-ները:
1.1.3 «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2019/17» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում առաջարկված գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցություններին չէին ներկայացել «Սմարթլայն և «Միսմա» ՍՊԸ-ների ներկայացուցիչները:

2. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2019/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

2.1 Ամփոփելով «**ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2019/17**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ-ին:
- 3-րդ, 4-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը, ինչպես նաև 7-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի համար հրավերով սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:
- ծանուցել «Սմարթլայն» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը :

2.3 Հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը, 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աթանեսյան .....

Հանձնաժողովի անդամներ՝

Լ. Էլարյան .....

Մ. Խաչատրյան .....

Մ. Եղիազարյան .....

Քարտուղար՝ Մ. Փարսադանյան .....